«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ՊԵՏ՝ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

«03. 10. 2020թ»

«ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ Փ/Ծ ԳԼԽԱՎՈՐ

Գ. ԳԱԼՍՏՅԱՆ

«_____» 2020թ»

ՊԼԱՆ

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) քաղաքացիական պաշտպանության պլանը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հարապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու դեպքում Համալսարանի խնդիրները, գործողությունները ու դրանց իրականացման կարգը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է՝ աշխատակազմին, ուսանողներին և նյութական արժեքները պաշտպանելու համար:

1. Համալսարանի քաղաքացիական պաշտպանության պլանը սահմանում է Համալսարանի քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, ռազմական դրության ժամանակ գործունեության, Համալսարանի աշխատողների և սովորողների պաշտպանության կազմակերպման, տնտեսության գործունեության կայունության ապահովման, փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման, համակարգի կառավարման, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ Համալսարանի վրա դրված խնդիրների կատարման կարգը, ծավալները, ուժերը, միջոցները:

2. Սույն պլանում ներգրավում են հետևալ մարմինները.

- Համալսարանի աշխատակիցները և սովորողները,
- տարահանման հանձնաժողովը,
- քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:

3. Պլանում ներգրավված մարմինների գործառույթներն են.

Համալսարանի աշխատակազմը՝
կազմակերպում և ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը Համալսարանի տարածքում, մասնակցում է մարզային պլաններով և ծրագրերով նախատեսված քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին, իրականացնում է աշխատողների և սովորողների պատսպարումը, և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը, ստեղծում է քաղաքացիական պաշտպանության ծառայություններ, քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ ուժեր և ապահովում է այդ ուժերի պատրաստականությունը, իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

4. Տարահանման հանձնաժողովը՝ կազմակերպում ու ղեկավարում է Համալսարանի անձնակազմի և սովորողների տարահանման միջոցառումները:

5. Քաղաքացիական պաշտպանության կազմավորումները՝ իրականացնում են փրկարարական, վթարավերականգնողական և այլ մասնագիտացված աշխատանքներ:

6. Սույն պլանի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքը, «Պաշտպանության մասին» օրենքը, «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքը, պաշտպանության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը:

II. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Համալսարանը գործում է Գավառ քաղաքում:
2. Համալսարանը բաղկացած է երեք մասնաշենքից, որոնցից երկուսը չորս հարկանի, իսկ մեկը՝ երեք հարկանի քարե շինություններ են:
3. Գլխավոր մասնաշենքը կառուցվել է 1992թ.-ին, երկրորդ և երրորդ մասնաշենքերը՝ 1974 թ.-ին:
4. Ցանկապատված տարածքը 2.51 հա է:
5. Շենքերի ընդհանուր մակերեսը 12472 մ^2 է:
6. Համալսարանում աշխատում և սովորում են 1075 մարդ, այդ թվում՝
   ա) Ուսանողներ՝ 900,
   բ) Աշխատակիցներ՝ 80,
   գ) Դասախոսներ՝ 95:
7. Համալսարանի հեռավորությունը՝
   ա) Հանրապետության պետական սահմանից՝ 45 կմ,
   բ) Մոտակա երկաթուղուց՝ 40 կմ,
   գ) Մոտակա ավտոմայրուղուց՝ 6 կմ,
   դ) Հայկական ատոմակայանից՝ 135 կմ,
   ե) Հիվանդանոցից՝ 1.5 կմ,
   զ) Գավառի հրշեջ փրկարարական ջոկատից՝ 5 կմ,
   է)) Միջհամայնքային ավտոճանապարհից՝ 0,5 կմ:
8. Համալսարանում ուսուցումը կազմակերպվում է մեկ հերթով:

Համալսարանը սնվում է էլեկտրասնուցման, գազի, ջրի և կապի կենտրոնացված ցանցից, որոնց անխափան գործունեությունը ապահովում են մարզային և համայնքային համապատասխան ծառայությունները:

9. Համալսարանն ունի առանձին ջեռուցման կետ, կոմունալ ցանց:
1. Մալուխային և խողովակային գծերը գտնվում են բարվոք վիճակում:
2. Համալսարանի երկու մասնաշենքերում առկա են նկուղային հարկեր՝ համապատասխանաբար 120մ^2 և 65 մ^2 մակերեսներով:

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԶԵՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Ելնելով տեղակայման վայրից և գործունեության բնույթից՝ Համալսարանը հանդիսանում է հակառակորդի հարձակման, գնդակոծման, ռմբակոծման և վնասակար գործողությունների հավանական թիրախ:
Հակառակորդի հարձակման դեպքում կարող է տուժել և օգնության կարիք ունենալ ողջ անձնակազմը՝ թվով 1075 (աշխատողներ և սովորողներ):
Համալսարանը քիմիական վտանգավոր և պայթյունավտանգ օբյեկտ չի համարվում, սակայն չի բացառվում հրդեհի առաջացումը և բռնկումը: Կոմունալ ցանցից ամենախոցելին գազատարն է, որի վթարման դեպքում պետք է անմիջապես փակել փականը և տեղեկացնել համապատասխան ծառայություններին:
Հակառակորդի հարձակման հետևանքների վերացման, Համալսարանում աշխատողների և ուսանողների պաշտպանության, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման, ղեկավարման և իրականացման, ինչպես նաև Համալսարանի գործունեության կայունության ապահովման նպատակով Համալսարանում ստեղծվում են քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարահանման հանձնաժողով և կազմավորումներ:

IV. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում և հարձակումից հետո, Համալսարանի աշխատող անձնակազմի և սովորողների պաշտպանության միջոցառումների կառավարումն իրականացվում է Համալսարանի ՔՊ պետի կառավարման կետից՝ Համալսարանի ռեկտորի աշխատասենյակից: Ելնելով իրավիճակից՝ Համալսարանի ՔՊ պետի որոշմամբ կառավարումը կարող է իրականացվել պահեստային կառավարման կետից: Հակառակորդի հարձակման հետևանքների վերացման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Համալսարանի ՔՊ պետը, առանձին տեղամասերում՝ տվյալ տեղամասում աշխատող փրկարարական օղակի հրամանատարը:

V. ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հակառակորդի հարձակման սպառնալիքի և անմիջական հարձակման մասին ահազանգը Համալսարանի ղեկավարությունը ստանում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանից կամ Գավառի քաղաքապետարանից: Շտաբի, ղեկավար կազմի և ՔՊ կազմավորումների հրամանատարների ազդարարման, ինչպես նաև փրկարարական աշխատանքների իրականացման, տեղամասերի հետ տեխնիկական և սուրհանդակային կապի ու տեղեկատվության աշխատանքներն իրականացվում են Համալսարանի կապի օղակի անձնակազմի միջոցով:

ՔՊ ազդանշանների հաղորդման համար օգտագործվում է ազդանշանային համակարգը (մեկ րոպե տևողությամբ կարճ ընդհատումներով հնչեցում), վերջինիս

անսարքության դեպքում այն իրականացվում է սուրհանդակային կապի միջոցով և սուր ձայն հանող հարվածների հնչեցմամբ:

VI. ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Համալսարանի և հարակից տարածքի վիճակի և դրա փոփոխությունների մասին տվյալների ստացման ու անընդհատ դիտարկման ապահովումն իրականացվում է դիտարկման կետի և հետախուզական կազմավորման անձնակազմի միջոցով: Հետախուզական խումբը ուսումնասիրում է նաև փլատակների և տարածքում վնասման և այլ օջախների վիճակը, գրանցում տուժածների առկայությունը, նրանց դուրս բերման կարգը և ուղիները: Հետախուզական կազմավորումների ընդհանուր ղեկավարումը, ինչպես նաև հետախուզական տվյալների ուսումնասիրումն իրականացվում են Համալսարանի ՔՊ պետի և շտաբի պետի անմիջական մասնակցությամբ:

Համալսարանի մարդաշատ մասնաշենքը համարվում է առաջնահերթ հետախուզման տեղամաս: Հետախուզական տվյալների հավաստիության և առավել ամբողջականության ապահովման նպատակով հետախուզական կազմավորումները համագործակցում են համայնքի և հարակից օբյեկտների հետախուզական կազմավորումների հետ՝ տեղեկությունների փոխանակման և ճշգրտման միջոցով:

VII. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հակառակորդի հարձակման սպառնալիքի և հարձակման դեպքում անձնակազմի պաշտպանությունն իրականացվում է՝

1. Անձնակազմը անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու և դրանք ժամանակին բաշխելու միջոցով,
2. Պատրաստ վիճակի բերելով պաշտպանական կառույցները պատսպարվողներին ընդունելու համար,
3. Անհրաժեշտ քանակի ջրի, սննդամթերքի և բուժմիջոցների պահեստավորմամբ, դրանց ստացումը և բաշխումը ճիշտ կազմակերպելով,
4. Աշխատակիցների և սովորողների պատսպարումը կազմակերպելով՝ պատասխանատուների անմիջական ղեկավարությամբ,
5. Անձնակազմի տարահանման և անվտանգ տարածքում նրանց ժամանակավոր բաշխման միջոցով:

VIII. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Անձնակազմի բուժսպասարկումն ու սանիտարահամաճարակային իրավիճակի հսկողությունը, ինչպես նաև փրկարարական աշխատանքների տեղամասերում տուժածներին առաջին բուժօգնության ցուցաբերումը՝ ըստ տուժվածության բնույթի տեսակավորումն ու տեղավորումն իրականացվում են բժշկական ծառայության պետի ուժերով: Պատրաստ վիճակի է բերվում Համալսարանի բուժկետը, ստուգվում է բժշկական միջոցների

առկայությունը: Համալսարանի բժշկական ծառայության պետն իր կազմով և սանիտարական օղակը՝ անհրաժեշտության դեպքում, տուժածներին ցույց են տալիս առաջին բուժօգնություն:

IX. ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Համալսարանում կազմակերպվող քաղաքացիական պաշտպանության միջոցառումների քողարկման անցկացման կարգին համապատասխան՝ առաջին հերթին փակվում են լուսամուտները՝ վարագույրերով:

X. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Աշխատակիցների և ուսանողների տարհանումը, հիվանդների և տուժածների տեղափոխման տրանսպորտային ապահովումը կատարվում է քաղաքապետարանի միջոցով:

XI. ՍՆՆԴԱՄԹԵՐԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Համալսարանի աշխատակիցների և ուսանողների սննդամթերային ապահովումը, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նյութատեխնիկական սպասարկման կազմակերպումը կատարվում է համապատասխան կառույցների (մարզպետարան, քաղաքապետարան) և կազմակերպությունների միջոցով:

XII. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՔՊ ինժեներական ապահովումը ներառում է անձնակազմի պատսպարման կազմակերպումն ու ապահովումը: Նշված միջոցառումներն իրականացնում է Համալսարանի ինժեներական գծով ՔՊ պետի տեղակալը՝ պատրաստ վիճակի բերելով պաշտպանական կառույցը պատսպարվողներին ընդունելու համար: Դրա համար ընդգրկվում են 8-10 ուսանող՝ մեկ դասախոսի գլխավորությամբ:

XIII. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՒ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հակառակորդի հարձակման հետևանքով առաջացած վնասման օջախներում փրկարարական վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար Համալսարանում ստեղծվում է 20 հոգուց բաղկացած խումբ, որը փրկարարական աշխատանքներում համագործակցում է հրշեջ, հետախուզական, հասարակական կարգի պահպանման և այլ կազմավորումների հետ: Ավելի բարդ իրավիճակներում համապատասխան կանչով ընդգրկվում են տարածքային հրշեջ փրկարարական ուժերը: ՔՊ համակարգի պատրաստականության բերման միջոցառումների իրականացման ընթացքում Համալսարանի ՔՊ պետը ղեկավարվում է ՀՀ Կառավարության համապատասխան որոշումներով:

XIV. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

- ✓ **«Օդային տագնապ» (OS) ազդանշանի դեպքում անհապաղ իրականացվում են հետևյալ միջոցառումները՝**

1) Համալսարանի հերթապահ ազդանշանը հասցնում է մշտական կազմին և ուսանողներին հետևյալ կարգով՝ զանգը (մեկ րոպե տևողությամբ կարճ ընդհատումներով) հնչեցնելով: Հոսանքի բացակայության դեպքում սուր ձայն արձակող հարվածներ հնչեցնելով:

2) անմիջապես դադարեցվում են դասերը Համալսարանում.

3) դասախոսները պատսպարում են ուսանողներին պաշտպանական կառույցներում: Պատասխանատվությունը դրվում է Համալսարանի ՔՊ պետի տարհանման գծով տեղակալի վրա.

4) ՔՊ պետի նյութատեխնիկական գծով տեղակալը Համալսարանի հերթապահի հետ համատեղ անջատում է ջրի, էլեկտրաէներգիայի և գազի մատակարարումը.

5) դասախոսների և ուսանողների օգնությամբ Համալսարանում կատարվում է հնարավորին չափ լուսաքողարկում.

6) տեղափոխվում և բաշխվում են անհատական պաշտպանության միջոցները, քիմիական և ճառագայթային հետախուզության սարքերը:

- ✓ **«Օդային տագնապի ավարտ» (OSԱ) ազդանշանի դեպքում՝**

1) կապի պահպանված միջոցներով և սուրհանդակների ներգրավմամբ ազդանշանը հասցվում է բոլորին, այդ թվում՝ թաքստոցներում պատսպարվողներին.

2) ստուգվում և վերականգվում է կապը ՔՊ վերադաս մարմինների ղեկավարների հետ.

3) կազմակերպվում է շուջօրյա հերթապահություն հիմնական կազմի ուժերով,

4) անհրաժեշտության դեպքում ոչ ռազմականացված կազմավորումների ուժերով և միջոցներով Համալսարանի տարածքում կատարվում են փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներ.

5) Համալսարանի ՔՊ պետի թույլտվությամբ անձնակազմը դուրս է բերվում թաքստոցներից.

6) առանձնահատուկ ուշադրություն է դարձվում թաքստոցներում պատսպարվածներին, ինչպես նաև փլատակներում վնասվածների հայտնաբերման, անվտանգ տարածք դուրսբերման և առաջին բուժօգնության կազմակերպման վրա.

7) իրականացվում է տարածքի հետախուզություն.

8) ՔՊ վերադաս մարմնի պետին տեղեկացվում է հակառակորդի հարձակման հետևանքով Համալսարանում ստեղծված իրավիճակի, մարդկային և նյութատեխնիկական կորուստների մասին, անհրաժեշտության դեպքում ներկայացվում է լրացուցիչ փրկարարական ուժերի անհրաժեշտության հայտ.

9) ուսումնասիրվում են Համալսարանում ուսումնական գործընթացի վերականգնման հնարավորություններն ու նպատակահարմարությունը:

Համալսարանի քաղպաշտպանության շտաբի պետ՝

_____ Խ. Սաֆարյան

ստորագրություն Ա. Ազգանուն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Համալսարանի ՔՊ վիճակը 03.10.2020թ դրությամբ

2. Համալսարանի հողամասի և շենքի հատակագծերը

3. Համալսարանի ղեկավար կազմի ազդարարման սխեման

3.1 Համալսարանի ՔՊ կազմավորումների ցուցակը

4. Համալսարանի ‹‹ԲԱՐՁՐ›› և ‹‹ԼՐԻՎ›› պատրաստակամության աշխատակարգի միջոցառումների ցանկ

5. Համալսարանի ՔՊ հետախուզության պլան և բացատրագիր

6. Համալսարանի անձնակազմի անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը

7. Համալսարանի անձնակազմի պատսպարման հաշվարկը

8. Համալսարանի անձնակազմի տարահանման հաշվարկը

9. Համալսարանի ՔՊ ուժերի և միջոցների հաշվարկը

10. Համալսարանի փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման պլանը

11. Համալսարանի ՔՊ կառույցների պատրաստականության բերման հաշվարկը

12 Համալսարանի գործունեության կայունության բարձրացման միջոցառումների պլան-ժամանակացույցը